ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՕՋԱԽ

Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի ղեկավարությամբ տաղանդավոր հայ ժողովուրդը ստեղծարար մեծ աշխատանք է կատարում ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Սովետական իշխանության գոյության 28 տարիների ընթացքում ստեղծված է արդյունաբերություն, բարձր զարգացման է հասել գյուղատնտեսությունը, կազմակերպվել են բազմաթիվ ուսումնական հաստատություններ և գիտահետազոտական հիմնարկություններ։ Հայաստանի մայրաքաղաք Երևանը դարձել է արդյունաբերական խոշոր կենտրոն, բարձր կուլտուրայի օջախ։

Սոցիալիստական ռևոլուցիայի զավակ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան գլխավորում է ռեսպուբլիկայի գիտա-հետազոտական աշխատանքը։ Նրա ինստիտուտներում և սեկտորներում Հայաստանի տաղանդավոր գիտնականները բազմակողմանի ստեղծագործական աշխատանք են կատարում առաջավոր գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներում։

Գիտությունների Ակադեմիայի գոյության հինգ տարիների ընթացքում ձեռք են բերվել գիտական կարևորագույն նվաճումներ, որոնք տեսական և գործնական հսկայական նշանակություն ունեն։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ՝ Սովետական Միության ակադեմիկոս Վ. Համբարձումյանը Բյուրականի աստղադիտարանում կատարած դիտումների հետևանքով գիտական ընդհանրացումներ է կատարել, որոնք կարևորագույն նշանակություն ունեն աստղաբաշխության մեջ։

Նշանավոր ֆիզիկոսներ՝ ակադեմիկոսներ Ա. Ալիխանովը և Ա. Ալիխանյանը էական արդյունքներ են ստացել կոսմիկական ճառագայթների հետազոտության գծով։

Տաղանդավոր մաթեմատիկոս, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ա. Շահինյանի ղեկավարությամբ ստեղծված է մաթեմատիկական դպրոց։ Նրա ղեկավարությամբ հաջողությամբ հետազոտական աշխատանք է կատարվում ֆունկցիաների թեորիայի գծով, երիտասարդ գիտնական մաթեմատիկոսներ են պատրաստվում ֆունկցիաների թեորիայի, մաթեմատիկական ֆիզիկայի և մեխանիկայի ասպարեզում։

Խոշոր գիտնական, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Ի. Եղիազարովը գլխավորում է Սևանի պրոբլեմի հետ կապված հիդրոտեխնիկական կառուցումների ուսումնասիրման բնագավառում կատարվող հետազոտական աշխատանքը։

Հսկայական են միշուրինական բիոլոգների՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամներ Գ. Բաբաջանյանի, Վ. Գուլքանյանի և ուրիշների նվաճումները գենետիկայի և սելեկցիայի ասպարեզում ցորենի նոր տեսակներ, ոչխարների նոր ցեղեր ստեղծելու ուղղությամբ։ Մեծ և այժմեական աշխատանք է կատարվել միկրոբիոլոգիայի գծով։

Խոշոր հաջողություններ է ձեռք բերել Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գեոլոգիական ինստիտուտը Սովետական Հայաստանի գեոլոգիական կառուցվածքը ուսումնասիրելու և հանքային ու ոչ-հանքային օգտակար հանածոներով այնքան հարուստ ընդերքները հայտնաբերելու գործում։ Առանձնապես պետք է նշել գեոլոգների հետազոտությունները նավթի հանքավայրեր որոնելու նպատակով, նրանց մասնակցությունը Սևանի պրոբլեմին։ Գեոլոգիական ինստիտուտի լաբորատորիաներում խոր ու բազմակողմանի հետազոտություններ են կատարվում ռեսպուբլիկայի ուսումնասիրման գծով։

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտում վերջին ժամանակներս նկատվում է հաջող բեկում։ Առանձնապես ուշադրության արժանի է սովետական գրականության սեկտորի ստեղծումը։ Ինստիտուտը հաջողությամբ կազմել է սովետահայ գրականության նվիրված հատորներ, ինչպես նաև գրականության դասագիրք միջնակարգ դպրոցների համար։

Այս բոլորը վկայում է, որ ինստիտուտը ղեկավարվելով իդեոլոգիական հարցերի վերաբերյալ Համկ(բ)Կ Կենտկոմի որոշումներով, «Զվեզդա» «Լենինգրադ» ամսագրերի մասին ընկ. Ժդանովի զեկուցումով և Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի որոշումներով, ձգտում է ստեղծել իդեոլոգիապես լիարժեք աշխատություններ։

Պատմության ինստիտուտը պատրաստում է հայ ժողովրդի պատմության դասագիրք։

Մենք ներկա լինելով Հայաստանում սովետական իշխանության հաստատման 28-րդ տարեդարձին և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հիմնադրման հինգերորդ տարեդարձին նվիրված Հայկական Գիտությունների Ակադեմիայի գիտական սեսիային ու մոտիկից ծանոթանալով ինստիտուտների և սեկտորների գործունեությանը, հնարավորություն ունեցանք անձամբ համոզվելու ռեսպուբլիկայում գիտության ու կուլտուրայի ծաղկման մեջ։

Գիտությունների Ակադեմիայի սեսիայում Հայաստանի խոշոր գիտնականների զեկուցումները ցույց տվին ընդգրկվող հարցերի լայնությունը և խորությունը, որոնց հիմնական նպատակն է զարգացնել ժողովրդի համար օգտակար գիտություն։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային ցանկանում ենք հետագա հաջողություններ, աշխատանքի ծավալում և կապի ուժեղացում Անդրկովկասյան եղբայրական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի ու Վրաստանի Գիտությունների Ակադեմիաների հետ։

Գիտության վաստակավոր գործիչ, գեոլոգիական և հանքաբանական գիտությունների դոկտոր-պրոֆ. Կ. ԱԼԻԶԱԴԵ

Գիտության վաստակավոր գործիչ, ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների դոկտոր-պրոֆ. Գ. ԱՄԻՐԽԱՆՈՎ

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ Գ. ԱՐԱՍԼԻ

Մաթեմատիկական գիտությունների դոկտոր պրոֆ. Զ. ԽԱԼԻԼՈՎ